**ՏԵՂԵԿԱՆՔ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ (Պ-800-09.12.2020-ՊԻ-011/0) ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

*Հոդված 1.* Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18 ՀՕ-528-Ն քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 299-րդ հոդվածի 1-ին մասում «տասից տասնհինգ տարի ժամկետով» բառերը փոխարինել ~~«քսան տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկմամբ»~~ «տասնհինգից քսան տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա կամ ցմահ  ազատազրկմամբ» բառերով ։

*Հոդված 2.* Օրենսգրքի 302-րդ հոդվածում «ութից տասնհինգ տարի ժամկետով» բառերը փոխարինել ~~«տասնհինգից քսան տարի ժամկետով»~~ «տասներկուսից քսան տարի ժամկետով» բառերով:

*Հոդված 3.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: